Ապրիլի 29-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

25/04/13թ. «Փյունիկ-2-99»-«Փյունիկ-1-99» խաղին «Փյունիկ-1-99» թիմի ֆուտբոլիստ Լյովա Ղարիբյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել 1000 դրամ:

23/04/13թ. «Բանանց-1-99»-«Ակադեմիա-99» խաղին ոստիկանության վատ աշխատանքի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 40000 դրամ:

25/04/13թ. «ԽՄՕՄՄ-96»-«Արտաշատ-96» խաղը չկայանալու «Արտաշատ-96» թիմի չներկայանալու պատճառով, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Արտաշատ-96» թիմի գրանցել տեխնիկական պարտություն, Արտաշատի համալիր մարզադպրոցին տուգանել 40000 դրամ:

25/04/13թ. «Թալ-Գրիգ-2000»-«Փյունիկ-2-2000» խաղին ոստիկանության վատ աշխատանքի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ «Թալ-Գրիգ» ՍՊԸ-ին տուգանել 40000 դրամ:

25/04/13թ. «Ֆուրման-96»-«Շիրակ-96» խաղին «Շիրակ-96» թիմի ֆուտբոլիստ Վահագն Դավթյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 2000 դրամ:

18/04/13թ. «Թալգրիգ-ֆզ»-«Պոլիտեխնիկ» խաղին ծեծկռտուկի համար, ուժի մեջ է մտնում ՀՖՖ-ի Կարգապահական նիստի N36 արձանագրության կետ 2-ի որոշումը և մարզադաշտը որակաղրկվում է մինչև մրցաշրջանի ավարտը «Թալգրիգ-ֆզ» թիմի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 10-րդ (մարզադաշտում կարգուկանոն չապահովելու համար) և 28-րդ հոդվածի 18-րդ (խաղը կիսատ տեսագրելու համար) կետերի համաձայն՝ «Թալ-Գրիգ» ՍՊԸ-ին տուգանել 60000 դրամ: